

ՀԵՍԴ ՀԱՐԱՊՈՂԿՈՄԱՏ
ԱՌԱՍՆԱՊԱՀԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՀՐԱԶԱՆԳ

1938 թվականի հունվարի 31-ին ՀԵՏՁՅՈՒՐԱՎՈՐ ԱՆԱՍՈՒՆՆԵՐԻ
ԱՐՁԵՍՏԱԿԱՆ ՍԵՐՄՆԱԿՈՐՈՒՄՆ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

MESZROS

1938

ՅԵՐԵՎԱՆ

636

3-21

ՀԵՍԴ ՀՅԴ.ՔՈՂԿՈՄԱՏ
ԱՆԱՍՆԱՊԱՀԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

30 JUL 2010

636
2-21

Խ

ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՀՐԱՀԱՆԳ

1938 թվին Խոջոր ՅԵՂԶՅՈՒՐԱՎՈՐ ԱՆԱՍՈՒՆՆԵՐԻ
ԱՐՁԵՍԱԿԱՆ ՍԵՐՄՆԱՎՈՐՈՒՄՆ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՊԵՏԱԿԱՆ 1938 ՅԵՐԵՎԱՆ

25.04.2013

21.202

I. ԱՐՀԵՍՏԱԿԱՆ ՍԵՐՄՆԱՎՈՐՄԱՆ ՊԼԱՆԻ ԿԱԶՄԵԼՆ ՈՒ
ՍԵՐՄՆԱՎՈՐՄԱՆ ԿԱՅԱՆՆԵՐԻՆ ՀԱՍՑՆԵԼԸ

Հանրապետական Հողժողկոմատները, յերկրային, մարզային հողվարչությունները կովերի արհեստական սերմնավորման պլանը հասցնում են շրջաններին, իսկ շրջանային հողրաժինները՝ յուրաքանչյուր գյուղխորհրդին, կոլտնտեսությանը և կոլտնտեսությունների արհեստական սերմնավորման կայաններին:

1. Պլանի մեջ ցույց է տրվում.

ա) արհեստական սերմնավորման համար նշանակված կովերի պլաքանակը (ըստ ցեղերի), այն ստորաբաժանելով կոլտնտեսությունների հոտի, կոլտնտեսականների, մենատնտեսների կովերի:

Արհեստական սերմնավորման կայանի գործունեյության շրջանում գտնվող անասունների լարհեստական սերմնավորման պլանը կազմելիս պետք է հաշվի առնել բոլոր կովերը և պլանավորվող տարգա ընթացքում գուգավորման հասակի համոզ յերինջները.

բ) տոհմային արտադրող ցուլերի դասավորումը, նրանց վորակը, ցեղային կազմը և նախատեսվող բեռնվածությունը.

գ) կազմակերպվող կայանների թիվը և նրանց պատրաստման ժամկետները.

դ) կադրերի (հրահանգիչների, սերմնավորող տեխնիկների և նրանց սպականների) ընտրությունը, պատրաստումը և վերապատրաստումը.

ե) սարքավորման ու գույքի առկայությունը և լրացուցիչ սարքավորման պահանջը, նշելով տեղ հասցնելու ժամկետները.

2. Առանձին կայաններին արվող արհեստական սերմնավորման պլանը կազմելիս, ըստ առանձին կետերի պետք է քննարկվի կոլտնտեսությունների անասնապահական բրիգադների արտադրական խորհրդակցություններում, գյուղխորհուրդների անասնապահական սեկցիաներում։ Կոլտնտեսությունների վարչությունների՝ կողմից հաստատված պլանը կետ առ կետ



1655

38

պետք ե հասցվի սերմնավորման տեխնիկին, կայանի բանվորաց կան բրդագին, կաթնապրանքային ֆերմայի տալարապահներին ու կթողներին. կոլտնտեսականներին ու մենատնտեսներին պատկանող կովերի սերմնավորման պլանը պետք ե հասցվի յուրաքանչյուր անասնատիրոջ: Գյուղագորհուրդների ու կոլտնտեսությունների ճշգրտած պլաններն ուղարկվում են շրջնողբաժիններին, իսկ վերջիններո՞ւ յերկրային, մարզային հողվարչություններին կամ չանրապետության հողգողկոմատին:

II. ԿԱԴՐԵՐԻ ՊԱՏՐԱՍՏՈՒՄԸ

1. Արհեստական սերմնավորումն սկսելուց առնվազն 2 ամիս առաջ հրահանգիչները կազմակերպում և անց են կացնում արհեստական սերմնավորման տեխնիկների և նրանց ողնականների պատրաստման դասընթացներ: Անցյալ տարիներում պատրաստված սերմնավորման տեխնիկներն ու նրանց ողնականները վերապատրաստման դասընթացներն անցնում են կրծատ ծրագրով:

2. Սերմնավորման տեխնիկների պատրաստման դասընթացները համալրվում (կոմպլեկտավորվում) են,

ա) կոլտնտեսություններում աշխատող տեխնիկ անասնապահներից,
բ) կոլտնտեսականներից ու կոլտնտեսուհիներից, առաջին հերթին՝ անասնապահական բրիգադների կազմից և նախորդ տարիներում արհեստական սերմնավորման կայաններում աշխատողներից:

3. Կուրսերի համար թեկնածուներ ընտրելիս անպայման մասնակցում և արհեստական սերմնավորման հրահանգիչը կամ դժանային դոոտեխնիկը:

4. Արհեստական սերմնավորման տեխնիկների ու հրահանգիչների պատրաստման դասընթացներն անցկացվում են ԽՍՀՄ-ի Հողգողկոմատի հաստատած ծրագրով: Պատրաստման տեղում առնվազն մեկ ամիս եւ:

5. Սովորողների տեսական և գործնական գիտելիքների առաջադիմությունն ստուգելու համար, դասընթացների վերջում վորակավորող հանձնաժողովներ պետք ե կազմել: Սերմնավորման տեխնիկների առաջադիմության ստուգումը կատարվում է արհեստական սերմնավորման յերկրային, մարզային կամ հանրապետական հրահանգիչի ներկայությամբ: Ամեն մի հաջող քննություն տվողին պետք ե վկայական տրվի դասընթացն ավարտելու

մասին, նշելով առաջադիմության թվանշանները (գերազանց, լավ, բավարար):

6. Դասընթացներն անցկացնելու ժամանակ անհրաժեշտ ե, վորպեսզի յուրաքանչյուր ուսանող գործնականում մի քանի անգամ կատարի սերմնավորման հետ կապված բոլոր գործողություններն ու ձևերը: Գործնականորեն տիրապետի կովերի ու վոչխարների արհեստական սերմնավորման տեխնիկային ու անհրաժեշտ տեսական գիտելիքներ ստանա:

7. Արհեստական սերմնավորման հատուկ դասընթացներն անցնող ամեն մի աշխատող պետք ե ոգտագործվի վոչ միայն կովերի, այլև վոչխարների արհեստական սերմնավորումն անցկացնելու համար:

III. ՆԱԽՐԻ ՆԱԽՐԱՏՐԱՍՏՈՒՄԸ ՅԵՎ ԱՐՏԱԴՐՈՂՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆԸ

1. Նախապատրաստման և գուղավորման շրջաններում մայր կենդանիներին պետք ե կերակրել առատ և լավորակ կերերով: Զուղավորման՝ սերմնավորման նախորյակին և զուղավորման շրջանում կովերին առատ և բարձր զորակի կերերով կերակրել ապահովում և նրանց բեր գալու միահամուռ հայտաբերումը և մեծ տոկոսի բեղմնավորումը:

2. Արտադրող ցուլերը ցեղական և զորակական կազմի տեսակետից ընտրվում են զոռատեխնիկական տոհմային աշխատանքի պլանին համապատասխան: Զուղավորման՝ արհեստական սերմնավորման համար ընտրված արտադրողներն իրենց ծագման և արդյունավետության վերաբերյալ տվյալներ պիտի ունենան: Արհեստական սերմնավորման կայաններում աշխատող ցուլերի նշանակումը կատարում էն պետ, տոհմարուծարանները և շրջնողբաժինները: Ընտրության համար կազմվում են հանձնաժողովներ, վորոնց կազմի մեջ են մտնում՝ սելեկցիոնները կամ տոհմային գործի զոռատեխնիկը (պետ, տոհմարուծարանի զորունեյության շրջաններից գուրս), անասնաբուժք, արհեստական սերմնավորման հրահանգիչը, ֆերմայի վարիչը և սերմնավորման տեխնիկը:

3. Բարձրարյուն անասունների գլխակազմ ունեցող տոհմային խորհանտեսությունների և տոհմային կոլտնտ. ապրանքային ֆերմաների արհեստական սերմնավորման կայաններում պետք ե գրվեն միայն գտարյուն և բարձր մթերատու կլիտային անասունների կենտրոնական մատյանում կամ թե պետական տոհմային

գրքում գրանցած և առաջին հերթին իրենց տված սերնդի նը-
կատմամբ ստուգված արտադրողները:

Տոհմային խորհուտակառությունների և տոհմային ֆերմանների
արհեստական սերմնավորման կայաններում գտնվող արտադրող
շուլերին լրիվ ոգտագործելու նպատակով դրանց են կցում մո-
տակա կոլտնտեսությունների ոգտագործելի նախիրների կովերը:

4. Ցածր գեներացիաների Մետիս անասուն ունեցող տնտե-
սություններում, արհեստական սերմնավորման կայանները, վոր-
պես կանոն, պետք ե ոգտագործեն այնպիսի արտադրողներ, վո-
րոնք պետական տոհմային գրքում գրանցելու համար սահման-
ված պահանջները բավարարում են:

5. Տավարի մասսայական մետիզացման շրջաններում, ար-
հեստական սերմնավորման կայաններում թույլ ե արվում ոգտա-
գործել պլանային ցեղերի լավագույն արտադրողները, վորոնք
ցածր չեն ըստ տոհմ. գրքում գրանցվածներից:

6. Մեծ բեռնվածություն ունեցող արհեստական սերմնավոր-
ման կայաններում (մեկ արտադրողին 500-ից ավելի կով), յեթե
կցվում են վոչ միայն ոգտագործելի, այլև բարձր մթերատու կո-
վեր տոհմային ֆերմաններից, պետք ե թույլ տալ ոգտագործել
միայն ելլու ու առաջնակարգ այն արտադրողներին միայն, վ-
րոնք պատեկանում են բարձրադրյունատու և դաշտյուն անա-
սունների խմբին և իրենց արդյունատվության հիմնական նշան-
ներով բարելավող են հանդիսանում: Տավարի մասսայական մե-
տիզացման շրջանների մեծ բեռնվածություն ունեցող արհեստա-
կան սերմնավորման կայաններում կարելի յե թույլատրել ոգտա-
գործելու արտադրողներ, վորոնք գրանցված են պետական տոհ-
մային գրքում:

Բոլոր գեպքերումն ել նշանակվող արտադրողներն իրենց ար-
դյունատվությամբ և գեներացիայի բարձրության տեսակետից
պետք ե ավելի բարձր լինեն, քան արհեստական սերմնավորման
կայանին կցված կովերը:

Կովերի կցումն արտադրողներին տոհմարուժական ֆերմա-
ններում ու անասնապահական տոհմարուժական խորհրդային տըն-
տեսություններում կատարվում ե համապատասխան սելեկցիոն
պլանների ու անհատական բոնիտիբովկայի գրանցումների, իսկ
մասցած կոլտնտեսություններում՝ համաձայն զուգավորման և մե-
տիզացման պլանների:

7. Կատեղորիկ կերպով արգելվում ե մայր կենդանիների

մասսայական սերմնավորում կատարելը մոտ ազգակցության մեջ
գտնվող արտադրողով (մայր-կով, գուստր-կովեր, քույր-կովեր
և այլն):

Մասսայական ազգակցական բուծումը կանխելու նպատա-
կով արհեստական սերմնավորման կետերում անհրաժեշտ ե ցու-
լերի պարբերական փոխարինում կազմակերպել, կատարելով այդ
համաձայն տոհմային աշխատանքների պլանի, մոտավորապես 3
տարին մեկ: Փոխելու հետեանքով սերմնավորման կայանը բեր-
ված նոր արտադրողներն իրենց վորակով նախորդներից ավելի
բարձր պիտի լինեն: Արհեստական սերմնավորման ամեն մի կա-
յան պետք ե յերկու արտադրող ցուլ ունենա, վորոնցից մեկը
հիմնական, իսկ մյուսը՝ պահեստի (ուղերձի):

8. Արհեստական սերմնավորման կայանում ամեն մի արտա-
դրողի համար պետք ե բաց անել հատուկ քարտեր, վարոնք
պետք ե պահվեն պետ. տոհմարուժարաններում և շրջնողրաժին-
ներում:

9. Արհեստական սերմնավորման կայաններում թույլատըր-
վում ե ոգտագործել միանգամայն առողջ, անասնաբուժ-սանի-
տարական մշակում անդած արտադրողներ (հետազոտում բրուցե-
լլողի և առուբերկուլյողի նկատմամբ):

10. Արտադրող ցուլերն արհեստական սերմնավորման կա-
յանի համար պիտի առանձնացվեն սերմնավորումն սկսելուց առ-
նըգաղն 1½—2 ամիս առաջ և առատորեն կերակրվեն: Արտա-
դրող ցուլերի ընտրության և արհեստական սերմնավորման կա-
յանների վրա բաշխում կատարելու հետ միաժամանակ նրանց
սեռական կարողության և սերմի վորակի ստուգում պետք ե կազ-
մակերպել շրջանային հրահանգչի մասնակցությամբ:

11. Ստուգվող բոլոր ցուլերին նախապատճենական շրջա-
նում արհեստական հեշտոց են ծածկել տալիս և սերմը մանրա-
գիտակի տակ հետազոտում: Արտադրող ցուլերի սերմի վորակը
նախապատճենական շրջանի առաջին ամսում պետք ե ստուգե-
առնվազն 5 որը մեկ:

Սերմնավորմանը յերկու շաբաթ մնացած, սերմի վորակի
ստուգումն որըմեջ ե կատարվում:

Ստուգման ժամանակ ամեն մի արտադրող ցուլին որական
2 անդամ ծածկում պետք ե տալ արհեստական հեշտոցի վրա, 2-3
ժամ ընդմիջումով:

12. Կետերին կցված բոլոր արտադրողները զուգավորման—

սերմնավորման սկզբին պետք է ունենան միջակ՝ 4-ից վոչ ցածր զնահատականով սերմ, այսինքն՝ միջին վրակի սերմ, վորի մեջ սերմնարդիշների առնվազն $80^{\circ}/_0$ -ն ուղղակի առաջընթաց շարժում ունի:

Արհեստական սերմնավորման կայաններում չի թույլատրվում սղաղործել միջակ՝ 4-ից ցածր զնահատականի սերմ տվող ցուլեր:

IV. ՍԵՐՄՆԱՎՈՐՄԱՆ ԿԱՅԱՆԸ ՇԵՆՔԵՐՈՎ, ԿԱՀԱՎՈՐՈՒՄՈՎ ՈՒ ԳՈՒՅՔԲՈՎ ԱՊԱՀՈՎԵԼԸ

1. Խոշոր յեղջուրավոր անասունների արհեստական սերմնավորման կայանները կաղմակերպվում են վարակիչ հիվանդություններից ապահով անտեսություններում (ֆերմաններում) և սպասարկում են կոլտնտեսությունների, կոլտնտեսականների ու մենատնտեսների հոտերը:

Քաղաքներում ու բանվորական ավաններում կաղմակերպվում են արհեստական սերմնավորման կայաններ (կետեր), բանվորների ու քաղաքի բնակչության անասուններն սպասարկելու համար:

Արհեստական սերմնավորման կայանների (կետերի) կաղմակերպումն անապահով անտեսություններում թույլատրվում է միայն այդ անտեսությունների անասունների սպասարկման համար և շրջնողբաժնի, քաղ. հողբաժնի անասնաբուժի անպայման գրավոր յեղբակացության գեպքում:

2. Արհեստական սերմնավորման կայանները կաղմակերպվում են հատուկ կառուցված կամ թե հարմարեցված շենքերում, վորտեղ հնարավոր և մշտական պատի վառարան դնելու:

Արհեստական սերմնավորման համար հատուկ շենքերը կառուցվում են ԽՍՀՄ-ի Հողմողկոմատի 1936 թ. հաստատած տիպային նախադերով:

Լույսի մակարդակն ու սերմնավորման կամերայի չափերը մեծացնել կարելի յեւ, բայց վոչ մի գեպքում նախագծում նախատեսված չափերից փոքր չպիտի լինեն:

Արտազրովների համար շենքերը կարելի յեւ առանձին կառուցել, կայանին մոտ:

Կայանի շենքը (սերմնավորման կամերան, լաբորատորիան, սերմ ստանալու սրանը) պետք է լինի տաք, չոր ու լուսավոր և բավարարի սանիտարական պահանջներին: Աշխատանքի ժա-

մանակ այդ շենքերում ջերմությունը պիտի լինի մոտ 20° տառանումով՝ $18-20^{\circ}$ -ի սահմաններում (ըստ Յելսիուսի):

Աշխատանքի ժամանակ արհեստական սերմնավորման կայանում ջերմության սուր իջեցումից պետք է խուսափել: Այդ պատճառով ել կայանի բոլոր մուտքերը կիպ ծածկող դռներով տաքացրած հողմարդել (տամբուր) պետք է ունենան:

3. Յեթե պլանով սերմի տեղափոխություն և նախատեսված, այդ գեպքում հիմնական կայանին կարելի յեւ ոժանդակ կայաններ կցել: Հիմնական և ոժանդակ կայանների մեջ ընկած տարածությունը վորոշվում է (սերմ տեղափոխելու համար) գոյություն ունեցող փոխադրական միջոցներով, յենելով այն հաշվից, վոր սերմի ստացման մոմենտից մինչև նրա սրկսելն ոժանդակ կայանում, 10—12 ժամից ավելի չտելի:

Ի տարբերություն հիմնականի, ոժանդակ կայանն աշխատում և հիմնական կայաններից բերված սերմով: Սերմի տեղափոխության համար անհրաժեշտ գործիքները (տերմոսները և այլն) ամրացվում են ոժանդակ կայանին:

4. Հիմնական կամ ոժանդակ կայաններին կարող են արհեստական սերմնավորման համար կցվել կովերի այն մանր նախիքները (վոչ ավելի քան 3 կիլոմետր շառավղի վրա գտնվող), վորոնց համար աննպատակահարմար և ինքնուրույն կայաններ կազմակերպել: Այդպիսի գեպքերում կցումը կատարվում է անասնաբուժական անձնակազմի գիտությամբ ու թույլտվությամբ:

5. Սերմն ստանալու, քննելու, նոսրացնելու և սերմնավորելու բոլոր աշխատանքներն անպայման կատարվում են շենքում՝ 20° միջին ջերմության տակ, $18-25^{\circ}$ Յ. տատանումներով: Մածեկերի տակ կամ բացությա սերմով աշխատել չի թույլատրվում:

6. Շոգյեղանակին արելվակեղ շենքերում չի կարելի աշխատել, ապա թե վոչ՝ 25° -ից բարձր ջերմության տակ սերմնարջիշներն արագ կերպով վոչնչանում են: Բարձր ջերմության վնասարար ազգեցությունից խուսափելու համար հարավային շրջաններում սերմնավորման կայանի պատուհանները դեպի արեելք դարձած պիտի մնեն, պատերն անջերմաթափանց (հում աղյուս) կառուցած, տանիքը յենթահարկով (չարգախով) կառուցած, իսկ պատերը՝ դրսից ու ներսից սպիտակացրած: Տարվա տաք յեղանակներին կայանում լավ և աշխատել վաղ առավոտյան ու յերեկոյան:

7. Աշխատանքի ժամանակ լուսավորությունը կայանում ցրված պիտի լինի: Արևի կողմից լուսավորվող պատուհանները

պետք ե վարագուրել բաց գույնի վարագույրներով (շղարշից կամ քաթանից):

Սերմնավորման կամերայի պատուհանի դիմաց զրվում է հաստոցը (դաղղաճը), իսկ սերմնավորումն անց ե կացվում կամերայի ներսում:

8. Սերմնավորման կայանն անասնաբուժարանների շենքերում չի կարելի կազմակերպել: Կայանի շենքում չի թույլատրվում գեղորակք պահել, վորովհետև սերմնաբջիջները դեպի ախտահանիչ ու հոտավետ նյութերը շատ զգայուն են:

9. Արհեստական սերմնավորման շենքերը զուգավորման նախորյակին պետք ե խնամքով ախտահանել (նոր հանդցրած կրով սպիտակացնել) և առաջ հողմանարել:

10. Կայաններին կցված նախիրներում վարակիչ հիվանդություններ հայտաբերելիս, սերմնավորողը պարտավոր ե այդ մասին անմիջապես տեղեկացնել շրջանի անասնաբուժական անձնակազմին:

11. Արհեստական սերմնավորման յուրաքանչյուր կայան, բացի արհեստական սերմնավորման դործիքներից, պիտի ունենատնտեսական սարքավորում՝ համաձայն սույն հրահանդի վերջում կցված ցուցակի:

Վ. ԿԱՅԱՆԻ ԱՆՁՆԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ՑԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԱՇԽՈՒՄԸ

1. Կայանի կանոնավոր աշխատանքի ցուցանիշներն են.

ա) արհեստական սերմնավորման պլանի կատարումը.

բ) կովերի բեր զալու (զուգավորման ցանկության) հսկողության կանոնավոր կազմակերպումը և բերի շրջանում գտնվող կովերի լրիվ ընտրությունը.

շ) աշխատանքը տեխնիկապես կանոնավոր կատարելը.

դ) մայր կենդանիների առավելագույն տոկոսի բեղմնավորումը և

ե) արտադրողների ճիշտ խնամքն ու պահպանումը:

1. Աշխատանքներն սկսելուց առաջ շրջնողրածինն ստուգուժ է կայանի պատրաստությունն արհեստական սերմնավորման համար (անհրաժեշտ գործիքներով ու նյութերով, սերմնավորող կաղըրերով ու արտադրողներով առանովված լինելը և այլն):

2. Մեկ հրահանգչով սպասարկվող կայանների քանակը սահմանվում է յենելով շրջանի տերիտորիայից: Վորպես կանոն, սպա-

սարկման համար մեկ հրահանգչին մինչև 10 կայան կարելի յետքալ:

3. Հրահանգիչը (արհեստական սերմնավորման հատուկ դասընթացներն ավարտած զոտեխնիկը) ղեկավարում է վերահսկում և արհեստական սերմնավորման աշխատանքները շրջանի սահմաններում (յեթե սերմնավորման կայանների քանակը տվյալ շրջանում ավելի չեն մեկ հրահանգչի համար սահմանված բեռնվածության նորմայից, կամ թե կցված 10 սերմնակայանների սահմաններում ե):

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.—Հրահանգիչները պատրաստվում են շրջնողրածինների ավագ զոտեխնիկների, տոհմային գծով աշխատական զոտեխնիկների ու շրջանային զոտեխնիկների կազմից:

4. Հրահանգչի պարտականությունների մեջ մտնում ե.

ա) բնակչության մեջ արհեստական սերմնավորման նշանակության մասին բացատրական աշխատանք տանելը.

բ) սերմնավորման տեխնիկների (սերմնավորող կադրերի) ընտրությունն ու պատրաստումը.

շ) մնացած անձնակազմի ընտրությունը.

դ) արտադրողների ստուգումը սերմի վորակի նկատմամբ.

ե) հսկողություն՝ նյութերի խնայողաբար ծախսման վրա.

զ) սերմնավորման կայանների մշտական հրահանգումը.

է) հսկողություն՝ արտադրողների նորմալ վիճակի վրա.

ը) հսկողություն՝ կովերի բնական զուգավորումն անորակ, վոչ ցեղական ցուլերի հետ կանխելու վրա.

թ) հաշվետվություն ներկայացնելը.

ժ) արհեստական սերմնավորման պլանի կատարման բոլոր աշխատանքների կանոնավոր անցկացման ու նրա արդյունքների պատասխանատվությունը:

5. Արհեստական սերմնավորման զործը կազմակերպելու աշխատանքներին մասնակից են զարձվում նաև կաթնապրանքային ֆերմայի վարիչները:

Կաթնապրանքային ֆերմայի վարիչի պարտականությունների մեջ մտնում են.

ա) մայրական կազմի ժամանակին նախապատրաստելու և հսկողությունը, վորպես կովերի զուգավորումը չկատարվի կողմանակի ցուլերով՝ կայանից դուրս.

բ) բերի (զուգավորման ցանկության) շրջանում գտնվող մայր

կովերի ընտրության աշխատանքների ղեկավարությունը (սերմ-նավորող տեխնիկի մասնակցությամբ)։

զ) արհեստական սերմնավորման կայանը բանող ուժով, արն-տեսական կահավորումով, պահանջվող նյութերով և կերերով ապահովելը։

6. Սերմնավորման կայանը ղեկավարում և կոլտնտեսության վարչության կողմից նշանակված, սերմնավորման տեխնիկը (սերմ-նավորողը)։

Սերմնավորման տեխնիկի պարտականությունների մեջ են մտնում,

ա) արհեստական սերմնավորման կայանի համար պլան կազ-մելը, շնոր նախապատրաստելն ու կահավորելը։

բ) արտադրող ցուլերի նախապատրաստումը և սերմի վո-րակի ստուգումը։

շ) սերմի ստացումը, գնահատումն ու սրսկումը։

զ) բեր յեկող մայր կենդանիների ընտրության, արտադրող-ների կերակրման ու խնամքի վերահսկողությունը։

ե) հիվանդ անասունների առանձնացումը։

զ) հրահանգչին կայանի աշխատանքների վերաբերյալ տե-ղեկանքներ ներկայացնելը։

է) կայանի գործիքների ու կահավորման հաշվառումն ու պահպանումը։

ը) արհեստական սերմնավորման նշանակության վերաբե-րյալ բացատրական աշխատանքները կոլտնտեսություններում, կոլ-տնտեսականների ու մենատնտեսների մեջ։

թ) արհեստական սերմնավորման արդյունքների հաշվառումը։

Իր աշխատանքներում սերմնավորող խստորեն ղեկավարվում է արհեստական սերմնավորման տեխնիկական հրահանգով ու հրա-հանգչի ցուցումներով։

7. Արտադրողներին կերակրելու և խնամելու համար կոլ-տնտեսության վարչությունը նշանակում է պատասխանատու մի անձնավորություն՝ սերմնավորողի ողնականի իրավունք-ներով։

Արտադրողներին խնամողը պարտավոր է արտադրողների խնամքի վերաբերյալ հատուկ դասընթացներ անցնել (ցանկալի յեւ, վոր նա անցած լինի սերմնավորող տեխնիկների պատրաստման դասընթացները լրիվ ծրագրով)։

8. Հավաքարաբները (լվացողները) կայանի շնորում մաք-

րություն են պահպանում, ամանեղենը լվանում, դործիքները պրի-մուսով բոցակիզում, ջուր տաքացնում, աշխատանքի ժամանակ լվանում հայելիները, կայանը տաքացնում ու լուսավորում, կա-յանի մաքրությանը հետևում, սրբիչները, խալաթները լվանում և այլն։

9. Կայանների սժանդակ բանվորները նշանակվում են կովերը սերմնավորման համար գաղղահին (հաստոցներին) մոտեցնե-լու և սերմնավորող տեխնիկի հանձնարարությամբ այլ աշխա-տանքներ կատարելու անհրաժեշտության ղեկում։

VI. ԱՐՏԱԴՐՈՂՆԵՐԻ ԿԵՐԱԿՐՈՒՄՆ ՈՒ ՊԱՀՊԱՆՈՒՄԸ

1. Արտադրող ցուլերի կերակրման ու պահպանման ժամա-նակ հիմնական պայմանները հետևածներն են.

ա) սպիտակուցային նյութերով հարուստ կերերով ապահո-վելը, գործինեան սպիտակուցի հավելումը կերի մեջ բարձրաց-նում և արտադրողի սեռական ակտիվությունը.

բ) կերարաժինը հանքային նյութերով ապահովելը.

շ) վիտամին պարունակող կերերով ապահովելը.

զ) կերարաժինի մեջ չափազանց ծավալուն կերեր չմոցնելը. կերարաժինը թե կոպիտ և թե խտացրած բազմազան կերերից կաղ-մելը։

ե) արտադրող ցուլերին ամեն որ գրսանքի հանել՝ ամառն սրական առնվազն 6—8 ժամ, ձմեռը՝ 4—6 ժամ տեկողությամբ, վորից վոչ պակաս 2 ժամը թեթե աշխատանքի լծելով։

Արտադրող ցուլերի գրսանքի լավագույն ձևն արա-ծելն ու լողացումն է — ամառ, իսկ ձմեռ՝ զրոսանքն ու լծած աշխատանքը, բացառությամբ շատ վատ յեղանակի ու անձրևա-յին որերի, կամ ձմեռվա բուքերի ժամանակ։

Ցուլերին կարելի յէ լծած աշխատեցնել նաև ամառ։ Արփա-շող ժամերին ցուլերին աշխատեցնել չի կարելի։

Ցուլերին աշխատանքներով չի կարելի ծանրաբեռնել։

Ցուլերին պետք է աշխատեցնել միայն գանդաղ քշելով։

Ցուրարանչյուր ցուլի լծասարքը պետք է առանձին լինի ու խնամքով հարգարած։

զ) ամիսն առնվազն մեկ անգամ անառնարուժական քննու-թյան յենթարկելը։

2. Արտադրող ցուլերին կերակրելու և խնամելու ժամանակ անհրաժեշտ է հետևել, վոր նրանք միշտ միջին գիրություն պահ-

պանեն, այսինքն չճարպակալեն, բայց զուգավորման ժամանակը չկորցնեն իրենց նորմալ զիրությունը: Այդ նպատակով հանձնարարվում ե ամսական 2 անգամ արտադրողների կենդանի քաշն սոսուգել:

3. Արտադրող ցուլերի համար լավագույն կեր են հանդիսանում:

ա) ձմռանը—լավ վորակի մարզագետնի խոան ու խտացրած կերերը (վարսակը կամ վարսակի, թեփի, կորեկի ու քուսպի խառնուրը), ինչպես նաև արմատապտուղները (լավ և զազարը) կամ լավ վորակի սիլոսը:

բ) Ամռանը—արոտը, մսուրում՝ կանաչ խոտն ու խտացրած կերերը (վարսակ կամ թե վարսակի, թեփի, կորեկի ու քուսպի խառնուրը):

Տոհմային արտադրող ցուլերի համար, զուգավորման շրջանում որպական 3 անգամ նրանց զուգավորելիս հանձնարարվում ե հետեւյալ կերանորմաները.

Արտադրող ցուլի կենդանի քաշը (կիլոգրամներով)	Ցուլին լծած աշխատեցնելու դեղքում		Զաշխատեցնելու դեղքում	
	Կերի միավոր (կգ)	Մարսվող սպիտակ. (կգ)	Կերի միավոր (կգ)	Մարսվող սպիտակ (կգ)
500	8,8	0,73	7,6	0,61
600	9,8	0,81	8,7	0,69
700	10,8	0,89	9,6	0,77
800	11,5	0,96	10,3	0,85
900	12,3	1,04	11,1	0,93
1000	13,2	1,12	12,0	1,00

4. Համաձայն վերեվում բերված նորմաների, արտադրող ցուլերին ձմռան շրջանում կերակրելու համար, որպական նրանց 3 անգամ զուգավորելու ու թեթել աշխատեցնելու պայմաններում, հանձնարարվում ե հետեւյալ (որինակելի) կերարածինը.

ա) Արտադրող ցուլը 600 կիլոգրամ կենդանի քած ունենալու դեղքում:

Մարզագետնի խոտ միջին վորակի . . .	10	կիլոգրամ
կամ տափաստանի խոտ (զանազան հացազգի բույսեր)	10	»
կամ առվույտի խոտ	9	»

Խտացրած	վարսակի	2 ¹ / ₂
կերի խառ	ցորենի թեփի	1 ¹ / ₂ —2
նուրդ	կորեկ	1/ ₂
	արևածաղկի քուսպ	1/ ₂
	Արմատապտուղներ (զազար)	5
	Վոսկրի ալյուր	0,05
	Կերակրի աղ (կոշտ)	աղամ

բ) Արտադրող ցուլն 800 կիլոգրամ կենդանի քած ունենալու դեղքում

Տափաստանի խոտ (զանազան հացազգի բույսեր)	12	կիլոգրամ
կամ մարզագետնի խոտ (միջակ)	12	»
կամ առվույտի խոտ	10	»
Խտացրած	վարսակի	3 ¹ / ₂
կերերի	ցորենի թեփի	2
կամ կորեկ	3/ ₄	
Խառնուրդ	արևածաղկի քուսպ	3/ ₄
	Արմատապտուղներ (զազար)	6
	Վոսկրի ալյուր	0,05
	Կերակրի աղ (կոշտ)	աղամ

Կորեկը պիտի արվի ջարդած վիճակում:

Յեթե ցուլը յերկարած է ժամանակ որպական 3 զուգավորում եւ ունենում ե անհրաժեշտ լինում այն չորսի հացնել, հանձնարարվում ե լրացուցիչ կերպով նրա կերարածնին ավելացնել որպական մինչև 10 լիտր սերդատած կաթ, մինչև 400 գրամ արյան ալյուր ու 5—10 հատ հոնմ ձու:

8. Ամռան շրջանին արտադրող ցուլերը սննդարար նյութերի զգալի մասը (ընդհանուր պահանջի 50 % չափ) ստանում են արտադրում, կամ թե գոմում արվող կանաչ խոտից:

Կերերի, սննդարար նյութերի մնացած պակսորդը (մինչև լրիվ նորման) պետք է լրացվի կերարածնի մեջ խտացրած կերերը մտցնելով (վարսակ կամ վարսակի, թեփի, ջարդած կորեկի ու քուսպի խառնուրդ):

9. Արտադրող ցուլերին արվող կերերը պետք է լինեն բացառապես լավ վորակի: Շատ ցանկալի յե կերերը խմորման յենթարկել:

10. Որպական կերարածնի կոպիտ կերերը պետք է յերկու

բաժին անել, իսկ խտացրած ու հյութալի կերերը՝ յերեք բաժին։
Արտադրող ցուլի ճիշտ կերակրման և պահպանման ցուցա-
նիներն են՝ լավ պատճենությունը, ցուլից որական վոչ պակառ
քան 3 եյակուլյատ՝ 15—20 լր. սմ. ընդհանուր քանակի լավո-
րակ սերմ ստանալը։

11. Ցուլերին ձմեռը պետք է ջրել որական 2, իսկ ամառը
3—4 անգամ։

Խմելու ջուրը լավ փորակի պիտի լինի, թարմ ու վոչ ել
շատ սառը (8—10° Յ): Պետք է ջրել առանձին գույլից կամ թե
խմոցից։

12. Արտադրող ցուլերին պետք է պահել հատուկ կադրց-
ված կամ հարմարեցված շնչքերում (կացոցներում): Կացոցը պետք
է ունենա յերկու մետր յերկարություն, 1,5 մետր լայնություն։

Շենքը, վորտեղ պահնում են ցուլերը, անպայման մաքուրը,
լուսավոր ու չոր պիտի լինի: Վոչ մի գեպքում ցուլերին չի կա-
րելի պահել խոնավ, ինչպես նաև մութ ու կեղտառ շնչքերում։

13. Ցուլերի կացոցը պետք է սարքավորված լինի կերա-
մաններով ու կապերով: Ցուլի կացոցի վրա կախված պիտի լինի
մի տախտակ, վորի վրա դրվում է ցուլի մականունը, ցեղը, տո-
րիքը, կենդանի քաշն ու ծագումը։

14. Ցուլերին ամեն որ պետք է մաքրել խոզանակով, մարմ-
նի կեղտոտված տեղերը լվանալ ջրով, ինչպես նաև մաքուր վի-
ճակում պահել նրա թլիքը։

15. Կճղակները յերկարելիս կարում են տարեկան 2—3 ան-
գամ: Բացի կտրելուց, անհրաժեշտ է մշտապիս հետեւ կճղակնե-
րին, մաքրելով գոմաղրից ու կեղտից։

16. Ցուլի հետ պետք է վարվել մեղմորեն, վստահ, բայց վոչ
կոպիտ: Արգելվում է զբուրել ցուլերին, զոտալ նըսանց վրա, հրել
վոտքերով, փայտով խփել և այլն: Մշտական հաստատակամ ու
վստահ վերաբերմունքը ցուլի հետ նրա մեջ հնազանդություն և
մշտում։

17. Ցուլերի, առանձնապես չար բնավորություն ունեցող-
ների հետ վարվելու հարմարության տեսակետից անհրաժեշտ է
նըսանց քթին ող անցկացնել։

Քթի ողը փորձված մարդ պետք է անցկացնի (զոտեխնիկը
տեխնիկ անասնապահը)՝ հատուկ ունելիքով ծակելով քթի միջ-
նորմի փափուկ մասը։

VII. ԱՐՏԱԴՐՈՂԻ ՈԳՏԱԳՈՐԾՈՒՄԸ

1. Արտադրող ցուլի տուաջին ծածկումն առավոտյան պիտի
լինի, կերակրելուց ու առավոտյան գրոսանքից 2 ժամ հետո,
յերկրորդը՝ մեկ և կես ժամ առաջինից հետո, յերրորդը՝ յերեկոյան
(կերակրելուց յերկու ժամ հետո):

2. Վորոշ ցուլեր բավականին յերկար ժամանակ կարող են
որական 2—3 անգամ ծածկել, առանց իջևնելու իրենց աված
սերմի քանակին ու վորակը: Բայց ուրիշ ցուլերի համար որական
1—2 գուղավորումը կարող է ուժից վեր լինել: Այսպիսի տա-
տանումները կարող են պատահել վոչ միայն տարրեր ցեղերի
պատկանող ցուլերի, այլև մինհույն ցեղի ու հասակի ցուլերի
մեջ։

3. Նորմալ զարգացած և առողջ մհծահասակ ցուլը միջի-
նում մեկ ծածկելիս 4—5 խորանարդ սանտիմետր խիտ կամ թե
միջակ սերմ և տալիս, 4-ից վոչ ցածր ակտիվությամբ: Իսկ յե-
թե ցուլը տալիս է 1—2 խորանարդ սանտիմետր նոր կամ թե
թույլ ակտիվություն ունեցող սերմ, դա ցույց է տալիս, վոր ցուլը
կանոնավոր չի կերակրվում և զբանաքը պակաս է:

Այսպիսի գեղքերում անհրաժեշտ է անմիջապես լավացնել
ցուլի կերակրման ու պահպանման պայմաններն ու մազնել գրո-
սանքներ։

VIII. ԳՈՐԾԻՔՆԵՐԻ ՅԵՎ ՆՅՈՒԹԵՐԻ ՊԱՀԵԼՆ ՈՒ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏԵԼԸ

1. Բոլոր գործիքներն ու նյութերը մաքուր պահարանում
պիտի պահպին. այդ պահարաններում գեղորայք պահել չի թույ-
լատրվում։

2. Աշխատանքն ավարտելուց հետո գործիքները՝ արհեստա-
կան հեշտոցը և ամանեղենը լվանում են սողայի 2°/o զոլ լու-
ծույթով, վորի համար մեկ լիտր ջրում 20 գրամ սողա պետք է
լուծել, ապա մաքուր ջրով վոզողում ու չորացնում։

Արհեստական սերմանվորման համար գործադրվող ամանե-
ղենն ու կահավորումն այլ նպատակների համար չպետք է գոր-
ծադրվին։

3. Արհեստական սերմանվորման սեղմնն ավարտելուց հետո
բոլոր գործիքներն ու ամանեղենը պետք է հավաքվեն, մետաղյա
իրերը վաղելինով ոծվեն, թղթով փաթաթվեն ու չոր տեղ պահ-
վին։

4. Շպրիցների ու սերմընդունարանների լվանալու և հեշտոցային հայելիները թրջելու համար արհեստական սերմնավորման կայաններում զործագրում են աղի լուծույթ (քլորական նատրիումի 10% անի լուծույթ):

Աղի լուծույթ պատրաստելու համար (քլորական նատրիումի 10% անի լուծույթ) արհեստական սերմնավորման կայաններն ուղարկում ե քիմիապես մաքուր քլորական նատրիում:

Արհեստական սերմնավորման կայանում քլորական նատրիումի առանձին բաժինները կշռում են կարելի համեմատ, հաշվելով մեկ լիտր ջրին 10 գրամ քլորական նատրիում:

Կայանում կշռով չլինելու գեպքում նատրիումի բաժինները հրահանդիմի կողմից պատրաստվում են շրջանային կենտրոնում և հղկած խցան ունեցող անօթների մեջ ուղարկվում են կայանները: Քլորական նատրիումի լուծույթը պատրաստվում է ամեն որ:

5. Շպրիցներն ու սերմընդունարանները լվանալու, հեշտոցային հայելիները թրջելու համար զործագրվող քլորական նատրիումի լուծույթը կարելի յե պատրաստել սովորական (լալ վորակի) յեռացրած ու քամած ջրով: Աշխատանքների նախորյակին կայանում յեղած (զործագրվող) ջրի պիտանիությունը ստուգվում է քլորական նատրիումի լուծույթ պատրաստելու տեսակետից:

Այդ նպատակով յերկու փորձանոթներում տեղական ու թուրած ջրից պատրաստում են առանձին լուծույթներ: Այդ լուծույթներին խառնում են մեկական խորանարդ սանտիմետր սերմ և որդա ընթացքում, յերկու ժամը մեկ անգամ, միկրոսկոպով ստուգում են սերմնավճինների ակտիվությունը:

Յեթե տեղական ջրից պատրաստած լուծույթի մեջ սերմի վորակը սուր կերպով իջնի, քլորական նատրիումի լուծույթ պատրաստելու համար միայն թորած ջուր են զործագրում:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.— Քլորական նատրիումի լուծույթի պատրաստման յեղանակը.

1. Յեռացնել ջուրը:
2. Սառեցնել:
3. Քամել:
4. Պահանջվող քանակությամբ ջուր (1 լիտր) չափել և լցնել հղկած խցան ունեցող անոթի մեջ:
5. Լցնել նրա մեջ քլորական նատրիումի պատրաստած բաժինը (10 գրամ) և լուծել:
6. Սերմնավճիններին ջուրը քայլայում ե, ուստի աշխատան-

քի ժամանակ գործադրվող ամանեղենը պետք է միանգամայն չոր լինի կամ թե քլորական նատրիումի մեկ տակոսանի լուծույթով լվացած:

7. Արհեստական սերմնավորման համար կարելի յե գործադրել միայն աղակյա շպրիցներ, վորովհետեւ այլ տեսակները և մանավանդ մետաղյա շպրիցները սերմնարջիջներին շատ շուտ սպառում են:

8. Սերմնավճինները հաշվելու ժամանակ խառնուրդը լրացնելու նպատակով գործադրվող 3 տոկոսանի քլորական նատրիումի լուծույթը պատրաստելու համար 1000 լի. սմ. ջրին 30 գրամ քլորական նատրիումի են խառնում: Քլորական նատրիումի 3 տոկոսանի լուծույթով շպրիցը լվանալ չի կարելի:

9. Սպիրտով թրջված բամբակի խծուները հետեւ ձևով են պատրաստվում: Խոնավածուծ (հիգրոսկոպիկ) բամբակը բաժանելով կտր ու տափակ զուգիկների՝ 96 սատինանի (ոեկտիֆիկատ) սպիրտով ներծում, հետո մղում ու անոթի մեջ են տեղավորում:

Արհեստական հեշտոցի ներփին պատերն ախտահանելու համար պատրաստում են 5—6 սանտիմետր տրամագիծ ունեցող խծուներ, իսկ կատերի ախտահանության համար՝ 3—4 սանտիմետր տրամագծով:

Խծուները պատրաստվում են վաղորոք ու պահպում հղկած խցան ունեցող անոթի մեջ:

10. Արհեստական սերմնավորման աշխատանքների ժամանակ թույլատրվող միակ ախտահանիչ նյութը զինու սպիրտոն և հանգիսանում և այն ել միանգամայն մաքուրը և կրկնագտված սպիրտը: Դեսատուրատ սպիրտն արհեստական սերմնավորման աշխատանքների ժամանակ կարելի յե միայն վորպես վառելիք գործածել:

11. Վաղելինի ու վաղելինի յուղի ամլացումը կատարվում է յեռացող ջրում 20 բույեի ընթացքում: Այդ նպատակով վաղելինը դետեզվում է հղկած խցան ունեցող բանկայի մեջ, իսկ վերջինս դրվում է ջուր լցրած կաթսայի մեջ, վորը տաքացվում է պրիմուսի վրա: Ջրով կաթսայի մեջ զնելուց առաջ վաղելինի բանկայի բերանն ու հատակը սետինե խողովակի կառըից գոտիով են շրջապատում, կամ թե բանկայի տակ մի կտոր բամբակ զնում:

12. Գործիքների (հեշտոցային հայելիների) ու լայնարերան ապակե ամանների (բանկաներ, լայնահատակ սերմընդունարան-

ներ) բոցակիզնումը կատարվում է պրիմուսի ուղղաձիգ բոցով, իսութեա չծխող այլ բոցի վրա:

Բոցակիզման համար կարելի յեւ ոգտագործել եւ սպիրտային խօսուծի բոցը: Բոցակիզման համար թույլատրվում է ոգտագործել և սպիրտովկա, յեթե վերջինը մեծ բոց չի տալիս: Ֆլամբիրովկայի յենթարկվող իրերը պետք եւ խանձել, բայց չշիկացնել:

13. 65° սպիրտ պատրաստելը. 677 խորանարդ սանտիմետր 96° սպիրտին ավելացնում են 323 խոր. սանտիմետր ջուր, վորից 65° սպիրտ եւ ստացվում: Սպիրտի թնդությունն ստուգվում է սպիրտովերով: 65° սպիրտը գործադրվում է շպրիցներն ու սերմընդունարանները լվանալու համար:

IX. ՍԵՐՄ ՍՏԱՆԱԼՀ

1. Սերմն ստացվում է 1936 թ. նմուշի (ИВК-3 — մարկայի) արհեստական հեշտոցի միջոցով: Թույլատրվում է գործադրել և 1935 թ. (ИВК-2) ու 1932 — 33 թվերի (ИВК-1) նմուշների արհեստական հեշտոցները:

2. Ցուլերին թույլատրում են ծածկել միայն կատարելապես առողջ կովեր, վորոնց հեշտոցում (հեշտոցային հայելու միջոցով զննելու ժամանակ) ու արգանդի պարանոցում թարախային կամ թե արյունախառն արտադրանք, ցան կամ թե լորձաթաղանթի սուր բորբոքված դրություն չի հայտարեկված: Թույլատրվում է նաև սերմ ստանալ խրովիլակի կամ թե ցուլի վրա:

3. Ցուլի ծածկումից առաջ պետք եւ նախապատրաստել արհեստական հեշտոցը: Յեթե հեշտոցը նորերս գործադրվել եւ, լվացվել և չորացվել, ապա արհեստական հեշտոցի ներքին խողովակը բոցակիզված կորնցանդի միջոցով խնամքով մաքրում են սպիրտի մեջ թաթախված բամբակի խծուծով: Յեթե արհեստական հեշտոցը յերկար ժամանակ առանց գործադրելու յեւ մնացել, այդ դեպքում նախապատրաստում են 9-րդ կետում նշված յեղանակով:

4. Դրանից հետո հեշտոցի արտաքին գլանի ծորակով ու սետինե խողովակով 800 — 1200 խորանարդ սանտիմետր 50 — 55° ֆ ջուր են լցնում, նայած շրջապառող ողի ջերմությանը, այն հաշվով, վորպեսզի ցուլի ծածկելու մոմենտին հեշտոցի ներսի ջերմությունը 40 — 42° Յ լինի:

5. Արհեստական հեշտոցի ներքին խողովակն իր ամբողջ յերկարությամբ բոցակիզված կորնցանդի կամ թե ապակե ձողիկի միջոցով ամլացված վագելինով լավ ոծվում է: Հեշտոցի ծայրը, ուր սերմընդունարանն է դրվում, 3 — 4 սանտիմետր մնում է առանց վագելին քսելու: Կարելի յեւ ոգտավել միայն զտած (սպիտակ) կամ գեղին վագելինով: Բորավագելին գործադրել չի կարելի: Աշխատանքի ընթացքում 2 — 3 որը մեկ վագելինը պետք եւ անպայմանորեն ամլացնել:

6. Վագելին քսելուց հետո սերմընդունարանը հազցվում է հեշտոցի ծայրը և ամրացվում ուստինե զտախով: Մաքուր ու չոր սերմընդունարանը նախորոք ախտահանվում է, գրա համար զգուշությամբ պահում են այն չծխող բոցի վրա (բոցակիզում), կամ թե լինում 65° սպիրտով, այնուհետեւ՝ 3 — 4 անգամ քլորական նատրիումի 10/0-անի լուծույթով: Դրանից հետո ծորակի ու սետինե խողովակի միջով այնքան ող են փչում, մինչև վոր կամերայի ներքին պատերն իրար կպչեն — փակվեն:

7. Արհեստական հեշտոցի ներսում ջերմությունը չափելու նպատակով (ջերմությունը հեշտոցի ներսում 40 — 42° Յ պիտի լինի) ցուլի ծածկելուց առաջ, հեշտոցի աղատ ծայրին, 1 — 2 րոպեյով անպայման, սպիրտի մեջ թրջած խծուծով վարակագերծված ջերմաչափ ե զրվում:

8. Դրանից հետո կատարվում է ծածկումը: Ցուլը կովի վրա բարձրանալու մոմենտին սերմավորողը բռնելով արհեստական հեշտոցն աչ ձեռքում, ճախով զգուշույթամբ բռնում է ցուլի թիվը և առնանդամն ուղղում է գեղի արհեստական հեշտոցի անցքը: Ծածկելու ժամանակ արհեստական հեշտոցը թիք դրությամբ պետք է բռնել, սերմընդունարանով գեղի վերը: Ցուլն առնանդամը հանելու մոմենտին հեշտոցը պետք է արագ շուռ տալ սերմընդունարանով գեղի ներքեւ, վորպեսզի (սերմը դուրս չթափի արհեստական հեշտոցից) ամբողջ սերմը սերմընդունարանի մեջ հավաքվի: Դրանից հետո արհեստական հեշտոցի խսկույն եեթ բաց եւ թողնվում ողը, իսկ սերմով լցված սերմընդունարանը զգուշությամբ հանվում է և ապակյա կափարիչով կամ մաքուր թղթով ծածկվում:

9. Ծածկելուց անմիջապես հետո արհեստական հեշտոցի ջուրը գուրս և թափվում ու լվացվում սողայի (1 լիտր ջրի մեջ լուծվում է 20 գրամ սողա) գոլ լուծույթով, սերմի մնացորդներից ու վագելինից, մաքուր գոլ ջրով վողովածվում է, մաքուր սրբիչով

սրբվում ու չորացվում: Յեթե հեշտոցը լվանալուց հետո պահանջվի նորից սերմ ստանալ, այդ գեղքում նրա ներսը մաքրվում է սպիրտային խճուծով:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.— Խոտիվ արգելվում է գործիքը (արհեստական հեշտոցը) վաղելինից չլվացած վիճակում պահել, վորովհետև վաղելինը միանալով ուտինի հետ՝ արագ կերպով փչացնում ե (անպետքացնում) հեշտոցը:

1932 թվի ԻՎԿ-1 և 1935 թվի ԻՎԿ-2 նմուշների արհեստական հեշտոցների նախապատրաստումը կատարվում է նույն յեղանակով, ինչ 1936 թվի նմուշի, բացառությամբ այն բանի, վոր:

1. 1932 թվի նմուշի հեշտոցի մեջ ջուրը պետք է լցնել մինչև պտուտակային խցանի մակարդակը:

2. 1935 թվի նմուշի արհեստական հեշտոցում՝

ա) հեշտոցի ներքին կամերան ախտահանելուց հետո սպիրտային խճուծով պետք է մաքրել նաև ուտինե ձագարը.

բ) սերմընդունարանն ամրացնել ձագարի մեջ և ապա ձագարը հազարել հեշտոցի վրա.

10. Արհեստական հեշտոցով աշխատելիս անպայմանորեն պահպանել և նկատի ունենալ հետեւյալը.

ա) սետինե ներքին խողովակը չափազանց ձգված չպետք է լինի.

բ) յեթե ճնշումն անբավարար ե, խողովակի ներքին անցքը չի փակվում: 1935—36 թվերի նմուշի արհեստական հեշտոցի մեջ ջրի և ողի քանակը ցուլի առնանդամի մեծությունից ե կախված:

Յեթե առնանդամը մեծ լինի՝ ջուրը քիչ է լցվում, և ընդհանուրակը.

զ) ներքին կամերան պիտի հարթ լինի ու բավականաչափ վաղելին քսված: Կամերայի մեկ մակերեսը խորտուրութ և, իսկ մյուսը՝ հարթ: Կամերան հազցնելիս պետք է հետեւ, վոր նրա հարթ մակերեսը դեպի հեշտոցի լուսանցքը դարձած լինի.

դ) ծածկելու միջոցին հեշտոցի ջերմությունը 40—42° Ց պիտի լինի.

ե) չի կարելի արագ շարժումով ցուլի առնանդամը դարձնել կամ ձեռքով բռնել այն, վորովհետև այլպիսի դեղքում ցուլերիցին թուլանում ե և նա կովի վրայից իջնում ե:

X. ՍԵՐՄԻ ԳՆԱՀԱՏՈՒՄՆ ՈՒ ԽՈՏԱՆՈՒՄԸ

1. Սերմը գնահատվում է ըստ ծավալի, գույնի, հոտի, սերմ-նարջիջների թանձրության ու ակտիվության: Ծավալը վարուժվում է սերմընդունարանի աստիճանաչափով (բաժանմունքներով):

2. Նեխական հոտ արձակող կամ վարդագույն, գորշ կամ կանաչավուն սերմը (թարախախառն ու արնախառն սերմ) չի թույլատրվում ոգտագործել:

3. Սերմի ակտիվությունն ու թանձրությունն անպայմանորեն հետազոտվում է մանրազիտակի տակ, աշքաչափով: Աշխատանքն առանց մանրազիտակի կատեգորիկ արգելվում է: Նախարով բոցակիզած ապակյա ձողիկի բարակ ծայրով կամ թե պիետակայով մաքուր առարկայական ապակու վրա դրվում ե մի կաթիլ սերմ ու ծածկվում ծածկապակով, կաթիլը պիտի լցնի ամբողջ առածությունը ծածկապակու տակ, բայց նրա յեզրերից դուրս չգա:

4. Սերմը հետազոտվում է մանրազիտակի տակ մեծացնելով 180—300 անգամ (որյեկտիվով 20 չ, ոկուլյարով 10 չ կամ 15 չ) գնահատությունը կատարվում է յերկու ցուցանիշներով:

ա. Ըստ խուռայան (սերմնաբարջների բանակը)

Խիտ սերմը նշանակվում է Խ. տառով — տեսողության գաշտոված և սերմնաբարջների համատարած ցանցով:

Միջակ սերմը նշանակվում է Մ. տառով, սերմնաբարջների միջև (տեսողության գաշտում) զատարկ տարածություններ են նկատվում:

Նոր սերմ նշանակվում է Ն. տառով, տեսողության գաշտում սերմնաբարջները դասավորվում են բավականաչափ բաց տարածություններով:

Յերբ վոր սերմնաբարջները բոլորովին բացակայում են, սերմը նշանակվում է Ա. տառով (աղոսպերմիա):

բ. Ըստ սերմնաբարջների շարժունակության (սերմնաբարջների առաջբերաց լեռանգրության շարժման)

Սերմը գնահատվում է աչքաչափով, մանրազիտակի տակ յեղած սերմնաբարջների ընդհանուր քանակի նկատմամբ մեկ հինգերորդական մասերով:

Աչքաչափի գնահատման արդյունքը գրանցվում է հինգ թվանշանային սիստեմով:

